

«ՆԱԽ ՀԱՅ, ԱՊԱ ՈՒՍՈՒՄ»

Ահա այդ պահանջն է վերջին ժամանակներն անգաղար հնչում սոցիալ-քաղաքականութեան մէջ ժողովրդական գործական հարցի վերաբերմամբ։ Անհերքելի փաստ է, որ կան բիւրաւոր երեխաներ, մատաղահաս աշակերտներ, որոնք ոչ միայն անբաւարար անունդ են ստանում, այլ և բացարձակապէս սովատանջ գոյութիւն են վարում։ Ուստի արեմուեան Եւրոպայում ձայներ են լըսում, որ պարտաւորեցուցիչ ուսումն այն ժամանակ գրական հետեանքներ կարող է ունենալ, երբ նմանապէս պարտաւորեցուցիչ լինի երեխաներին անունդ տալը, որը օրէնսդրական ուժով պէտք է մտցնել բոլոր ժողովրդական գործականութեանում։ Դա մի սոցիալ-առողջապահական անհրաժեշտ միջոց է, որ հնարաւորութիւն է տալիս պետութեանը կամ հասարակական որոշ համայնքներին՝ լուրջ կերպով հոգալ և ուշադրութիւն գարձնել մատաղ սերնդի ֆիզիկական ու հոգեկան զարգացման վրայ։ Միանգամայն անխղճութիւն կը լինէր պահանջնել քաղցած ու սովատանջ աշակերտներից, որ սրանք լարեն իրենց մտաւոր ուժերը, արգասաւոր կերպով արտադրեն իրենց ուղեղային աշխատանքները, երբ նրանք ֆիզիկապէս հիւծուած, յոգնած ու թմրած, նստելով իրենց գառարաններում, կորցնում են կամ անկարող են արտայայտելու իրենց ընդունակութիւններն ուսման մէջ։ Հատ ուսուցիչներ գանգատում են այդ տեսակ աշակերտների հետ պարագելու գժուարութիւնների վերաբերմամբ։ Ահա այսպիսի աննպաստ ուսումնարանական պայմաններն նկատի առնելով, բազմաթիւ մանկավարժներ, նաև սոցիալ-քաղաքագէտներ, անյետաձգելի են գտնում, որ պետական կամ համայնական հաշուազ ձրի ճաշ մատակարաւուի ժողովրդական գործականութեանում եթէ ոչ անխտիր բոլորին, գոնէ առայժմ չունենոր աշակերտներին։

Ի հարկէ կան շատ հակառակորդներ, սրոնք, ինչ ինչ

տեխնիկական անյարմարութիւններն և սոցիալ-տնտեսական հանգամանքներն ի նկատի առնելով, մասամբ վաղաժամ և մասամբ էլ զնասակար են համարում այդ տեսակ պարտաւորեցուցիչ պետական սնունդն աշակերտների համար։ Ամսադրի սուզ էջերը թոյլ չեն տալիս կանգառներու հակառակորդների այդ հետաքրքիր առարկութիւնների վրայ։ Սակայն այստեղ հարկ է սւրախութեամբ շեշտել, որ պարտաւորեցուցիչ սնունդի անհրաժեշտութիւնն զգացել են բոլոր կուլտուրական երկրներում, և այդ ուղղութեամբ ոչ միայն յաջող փորձեր են կատարւում, այլ և մի քանի երկրներում նոյն խակ իրադուծւում է օրէնքուդրական եղանակով։ Առաջինն Անգլիան է, որ օրինական կերպով կարգաւորել է ու հաստատել ժողովրդական դրաբոցներում պարտաւորեցուցիչ ձրի սնունդ մատակարարել աշակերտներին։ Անգլիայում 263 գլուոցական շըրջաններն ունին 118 յատուկ աշակերտական ճաշարաններ։ Անգլիական այդ օրէնքը կայանում է նրանում, որ տեղական գլուոցական բարձր վարչութիւններին պարտաւորեցուում է անպայման միջոցներ ձեռք առնել յատուկ խոհանոցներ ու ճաշարաններ կառուցանելու, որտեղ աշակերտները՝ չքաւորները ձրի, խակ ունեորները ծնողների հաշուով ստանալու են ճաշ և սնունդ։ Վարչութիւնների հայեցողութեան է թողնուած, արդեօք ճաշ թէ նախաճաշ են յարմար գտնում երեխաններին մատակարարելու. այդ պարտաւորութիւնների կատարումը չպէտք է յանձնուի ուսուցիչներին, որպէս զի սրանք չժանրաբեռնուեն աւելորդ պարտականութիւններով։ Զքաւոր երեխաններին այնպիսի ձեռվ պէտք է տրուի այդ ձրի սնունդը, որ նրանք արտաքին կերպով չտարրերուեն միւս ունեոր աշակերտներից և չիրաւորուեն փրկնց ինքնասիրութեամբ, թէ ձրի ճաշ են ստանում։ Ունեար ծնողներն օրինական եղանակով պարտաւորուելու են վճարել իրենց հասանելիք տուրքը իրենց զաւակների մնաւնդի համար։ Ընդհանրապէս այդ ճաշարանական հիմնարկութիւնների ծախսքերի համար անհրաժեշտ գումարները

ստանալու նպատակով տեղական վարչական մարմինները իրաւունք ունեն համայնական յատակ տուրքեր սահմանելու, որոնք որոշ սահմանից չպէտք է անցնեն, երբ այդ գումարները չեն բաւականահռում, պետութիւնը կարող է որոշ օժանդակութիւն տալ և հարկէ տեղական հասարակական, համայնական և այլ բարեգործական հիմնարկութիւնները լիակատար իրաւունք ունեն այդ բոլոր ծախքերն իրենց գրայ վերցնելու, բայց և միենայն ժամանակ չպէտք է շեղուեն հաստատուած օրենքների որոշումներից ու կարգերից:

Գերմանիայում ոչ մի օրէնսդրական պարտականութիւն չկայ գպրոցական պարտադիր ճաշերի վերաբերմամբ նայց դրա փոխարէն մասնաւոր հասարակական հիմնարկութիւններն, քաղաքային համայնքներն (մունիցիպալիտետները) և բարեգործական ընկերութիւնները զանազան քաղաքներում ձգտել են իրագործել աշակերտների ձրի սննդատու հիմնարկութիւններ ստեղծելու Այդ կողմից Գերմանիայում մեծ դեր են խաղում սոցիալ-դեմոկրատիական ներկայացուցիչները քաղաքային խորհրդարաններում, որտեղ նրանք անդադար առաջարկեն են արել պահանջներ դրել, որ աշակերտներին ձրի կերակրութ մատակարարութ գպրոցներում: Պէտք է այստեղ նկատել, որ գերմանական գպրոցներում ուսումնական պարապմունքները տեղի են ունենում ամբողջ օրը, ընդմիջումնով ճաշի համար, երբ աշակերտները Յ ժամով տուն են գնում: Ուստի գպրոցական ճաշի իրականացումն հենց տեխնիկական տեսակէտից մեծ յարմարութիւն է ներկայացնում երեխաների համար: Վիճակագրական միքանի տեղեկութիւններից երկում է, որ Եերինում այսպէս անուանած «Մողովրդական մանկական խոհանոցները» ճաշ են բաժանել մի քանի գպրոցներում աշակերտներին 1905—1906 ուսումնական տարում 457,323 ձրի բաժիններ և 80,418 բաժիններ, իւրաքանչիւրը 5 պֆենիկով ($2\frac{1}{2}$ կոպ.) Այժմ երկու քաղաքներում՝ Մաննհայմում և Նորտարարութ սոցիալ-դեմոկրատ քաղաքային

իրաւասուների առաջարկով որոշուել է համայնական՝ դը-
րամարկղի օժանդակութեամբ պարտաւորեց ուցիչ սնունդ
մատակարարել ժողովրդական դպրոցներում չքաւոր ա-
շակերտներին ձրիապէս, իսկ ունեորներին, որոշ տուրք
(այսինքն սննդի արժէք) գնելով սրանց ծնողների վրայ-
գերմանիայում այժմ նկատելի է մեծ շարժում մանկա-
վարժական շրջաններում այն մտքով, որ ամբողջ երկրի
ժողովրդական դպրոցներում մռւծուի աշակերտներին
պարտաւորեցուցիչ սնունդ մատակարարելը օրէնսդրական
կարգով և պետական հաշուով:

Ֆրանսիայում աշակերտներին սնունդ մատակարա-
րելու հարցում մեծ յառաջադիմութիւն է արել Փարիզը,
թէև այս պետութեան մէջ էլ բացակայում է այդ հարցի
վերաբերեալ որ և է օրէնսդրական պարտաւորութիւնը
Այժմ Փարիզի 20 քաղաքամասերում գոյութիւն ունեն-
յատուկ դպրոցական ճաշարաններ, ուր աշակերտներին
մատակարարում է տաք կերակուրք: Այդ ճաշարանները
պահում են բացառապէս քաղաքային գանձարանի հաշ-
ով, թէև այդ ծախսերին մասնակցում են համեմատա-
բար քաղաքի կողմից տրուած գումարների հետ շատ
չնչին օժանդակութիւններով նաև զանազան հասարակա-
կան հիմնարկութիւններ և ընկերութիւններ, ինչպէս և
դպրոցական գանձարանները: 1900 թուին դպրոցական
և հասարակական գանձարանները տուել են այդ նպա-
տակով 28,000 ֆրանկ, մինչդեռ քաղաքային վարչու-
թիւնն իր գանձարանից տուել է 1 միլիոն ֆրանկ: 1905
թուին Փարիզի քաղաքային վարչութեան ծախքը այդ
նպատակով աւելացել է նաև 20 հազար ֆրանկով, յիշեալ
մի միլիոնի վրայ: Ընդամենն այդ տարուայ մէջ տրուել է
ճաշ 172,705 աշակերտներին, որոնցից 142,693 հոգի կա-
րուած ընտանիքների զաւակներ էին, բաժանուել են
92,280,000 բաժին տաք կերակուրք, որոնցից 5,576,000-ը
ձրի էին:

Իսկ մեզանում հասարակական հիմնարկութիւնները,
ուսումնաբանական վարչութիւնները ոչ միայն միջոցներ

չեն ձեռնարկում ժողովրդական դպրոցներում աշակերտներին պարտագիր սնունդ մատակարարելու սովորութիւնը մտցնելու, նոյն իսկ չեն էլ մտածում այդ մասին, դուցէ և չեն էլ երեակայում, որ եւրոպական ուսումնարաններում այդպիսի կարգեր են մտցրած աշակերտների սոցցիալ-առողջապահական տեսակէտից։ Մինչդեռ մեզանում, մանաւանդ կովկասում, երեխաներին ձրի դպրոցական ճաշ մատակարարելու անհրաժեշտութիւնն աւելի ևս պահանջողական է, քանի որ մեր ժողովրդական դպրոցների յաճախորդները գրեթէ բացառապէս չքաւոր ու աղքատ ընտանիքների գաւակներ են. Անկասկած այդ ընտանիքներից շատերը անկարող են բաւարոր սնունդ տալ իրենց երեխաներին, որոնք քաղցած ու սոված գալիս են գըպոց և ֆիզիկական ահագին առաջանքներով ու վնասներով իւրացնում ուսումնական առարկաները։ Այդ փաստը կարող են հաստատել մեր բոլոր ժողովրդական ուսուցիչներն իրենց անձնական յիշողութիւններով։ Միամտութիւն կը լինէր ի հարկէ մեր կողմից, եթէ մենք յայսերս գնէինք կառավարչական մարմինների, բիւրօկրատիայի վրայ, որ սա որ և է օրէնսդրական եղանակով իրականացնէր դպրոցական պարտագիր սնունդի գաղափարը։ Մնում է, որ կրկին հասարակական հիմնարկութիւնները, քաղաքային խնդիրավարական մարմինները հանդէս դան։ Այս դէպքում մանաւանդ աւելի բարեյաջող դրութեան մէջ են հայ-ծիսական դպրոցները, որոնք, կախուած լինելով անմիջապէս տեղական ծխական համայնքներից ու կառավարուելով այդ ծխերից ընտրուած կոլեգիալ մարմիններով, ամենայն հնարաւորութիւն ունին մտցնելու իրենց դպրոցներում պարտագիր ձրի սնունդ բոլոր աշակերտներին անխոտիր, առաջին քայլերում կարելի է բաւականանալ գոնէ նախաճաշով։ Դրամական միջացները կարելի է ձեռք բերել, սահմանելով յատուկ այդ դպրոցական ճաշերի համար որոշ փոքրիկ տուրքեր միմիայն ունեռող ծխերի վրայ, էլ չենք ասում, որ կարելի էր մասնաւոր բարեգործ օժանդակողներ կամ ընկերութիւններ

գտնուէին, որոնք իրենց կողմից էլ կարող էին որպէս գրաւ-
մական օգնութիւն հասցնել:

Այդ տեսակ պարտադիր սնունդի մատակարարումն
աշխակերտներին մեր գորոշներում միանգամայն անհրաժ-
ժեշտ, հերթական հարց պէտք է գարձնել Աւելորդ ենք
համարում մանրամասնութիւնների մէջ մտնել նրա նշա-
նակութիւնը բացատրելու, քանի որ ամենատարրական
հասկացողութեան տէր մարդուն էլ դա պարզ է, ինչպէս
լոյս Բայց հերթական հարց դարձնելով դպրոցական պար-
տադիր սնունդի մատակարարումը, մենք բնաւ ելակէտ
շպէտք է ունենանք բարեգործական գաղափարը, աղքա-
տախնամութեան միտքը. այլ պիտի դատենք զուտ սու-
ցիալ-առողջապահական տեսակէտով, հասարակական ոյ-
ժերի կանոնաւոր զարգացման պայմանների անհրաժեշ-
տութեամբ. պիտի կանգնած լինինք այն հոյեցակէտի
վրայ, որ մարդկային ու հասարակական մօտաւոր-բարոյա-
կան-հոգեկան զարգացումն ամբողջապէս հիմնուած է նրա
նիւթական տարրերի վրայ, Ահա թէ ինչու անհրաժեշտ
է, որ մեր հասարակութեան մէջ էլ հնչէ այն դիտակցա-
կան պահանջը, որ արդէն վաղուց լուսում է կուլտուրա-
կան երկներում՝ «նախ հաց, ապա ուսում»....:

Խ. Ա.

Կ. Պ. ՊՈԲԵԳՈՆՈՍՑԵՎ

Թարգմանօրէն տպագրութեան ենք տալիս «Բեսսարած
ժիշի» թերթի համարներից մէկում՝ զետեղած սոյն
յօդուածը, որի առթիւ խմբագրութիւնը իւր կողմից
հետևեալ նկատողութիւնն է անում».

Ընդօրինակում ենք «Русский Архивъ»-ից Կ. Պ. Պո-
բեգոնոսցեվի Ե. Կ. Տիւտչեային գրած մի շարք հե-
տաքրքիր նամակները: